



2013 թվականի մայիսի 29-30-ին Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը և Վիրահայոց թեմի իրավաբանական բաժնի ղեկավար և Վիրահայոց Թեմի առաջնորդի խորհրդական Լևոն Իսախանյանը

մասնակցեցին կրոնի և դավանանքի հարցերով տարածաշրջանային կոնֆերանսին, որին մասնակցում էին նաև պատվիրակություն Հայաստանից, Վրացական Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքության ներկայացուցիչներ, Վրաստանի պետական անվտանգության խորհրդի փոխքարտուղար տիկին Թամար Կինժուրաշվիլին, Վրաստանի կրթության փոխնախարար պարոն Դավիթ Զուրաբիշվիլին, Վրաստանի ժողովրդական պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակին առընթեր գործող հանդուրժողականության կենտրոնի ղեկավար պարոն Բեքա Մինդիաշվիլին, ինչպես նաև Վրաստանի պետական հիմնարկությունների, կրոնական և ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից կոնֆերանսին մասնակցում էր Շահե վարդապետ Անանյանը:

Կոնֆերանսին զեկուցումներով հանդես եկան Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարար պարոն Պաատա Ջաքարեիշվիլին, կրոնի և համոզմունքների ազատության հարցով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող պարոն Հայներ Բիլեֆելդը և ուրիշներ:

Լևոն Իսախանյանը ներկայացրեց Վիրահայոց Թեմը և Թեմին անհանգստացնող հրատապ հիմնախնդիրները, ինչպես նաև Վրաստանի կառավարությանը ներկայացրեց հանձնարարականներ՝ ուղղված այնպիսի հիմնադրությաին հարցերի կարգավորմանը, ինչպիսիք են խորհրդային ժամանակաշրջանում բռնագրավված հայկական տաճարները Վիրահայոց Թեմին վերադարձնելը և Վրաստանի բոլոր կրոնական կազմակերպությունները համամասնորեն ֆինանսավորելու մեխանիզմի մշակման անհրաժեշտությունը: